


2063



Հայրոց Լուսիններ  
ՊԵՏՐՈՍՅԱՆ

Էրևան

012

Կ-30

012  
4-30

15 APR 2003

ՀՍՍՀ ԿՈՒՆՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՍՍՀ ԱՂ. ՄՅԱՍՆԵՐԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ-ՄԱՏԵՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԿՆԿԱՏՈՒ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲԱԺԻՆ

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԸ

## ՎԱՐԴԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈԹԱԳՐՎԱԾ  
ՑԱՆԿ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

7003

ԵՐԵՎԱՆ - 1971

Հեղինակ-կազմող՝ ՍԵՂԱ ԿՈՍԻՆՅԱՆ

Խմբագիր՝ Ա. ԻՍՈՅԱՆ

2007



1353-2004

Государственная республиканская библиотека Арм. ССР  
им. Ал. Мясникаяна

Отдел научно-библиографической и справочной работы

ВАРДГЕС ПЕТРОСЯН  
Библиографическая памятка  
Автор—составитель: С. Коцинян

Редактор: А. Исоян

ՎԱՐԳԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Վարդգես Պետրոսյանը ծնվել է 1932 թվականին, Աշտարակում: Միջնակարգ կրթությունը ստացել է Երևանի 26 կոմիսարների անվան դպրոցում: 1949 թվականին ընդունվել է 54-ին ավարտել է Երևանի Պետական համալսարանի լրագրողների բաժինը: Դեռ ուսանողական տարիներից զբաղվել է թղթակցությամբ. աշխատել է համալսարանի ուսանողական թերթում: 1954—1955 թթ. եղել է «Բայազետի կուխոզնիկ» շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1955—1957-ին, նույն պաշտոնով աշխատել է «Սովետական Հայաստան» և «Ավանգարդ» թերթերում: 1961—1968 թթ. եղել է «Պիոներ կանչ» թերթի խմբագիր, 1966-ից խմբագրում է երիտասարդական «Գարուն» ամսագիրը:

Առաջին գիրքը (բանաստեղծությունների ժողովածու) լույս է տեսել 1958 թվականին «Բալլադ մարդու մասին» վերնագրով, այնուհետև՝ «Վերջին գիշերը» պատմվածքների ժողովածուն, որից հետո պարբերաբար հրատարակվել են «Անավարտ դիմանկարներ», «Քաղաքի կիսաբաց լուսամուտներ», «Ապրած և չապրած տարիներ», «Հայկական էսքիզներ» ժողովածուները:

Գրականության բնագավառում կատարած աշխատանքների համար 1968 թվականին Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմը իր մրցանակը շնորհեց գրող և լրագրող Վ. Պետրոսյանին:

1932

Որպես գրող և լրագրող Վ. Պետրոսյանը իր ողջ էությունը կապված է երիտասարդության հետ, նրա հուզող հարցերին, որոնումներին ու սայթաքումներին: Երիտասարդություն ասելով Պետրոսյանը նկատի ունի ոչ այնքան ծննդյան թիվը, որքան մտածողությունը, գաղափարը: Նա այն ստեղծագործողներից է, որոնք աշխատում են հասկանալ մեր ժամանակը, նոր սերնդի առջև ծառայած բարդությունները, խորամուխ լինել նրան հուզող հարցերում, մտածել նրա մասին, աշխատել հասկանալ ու ճշմարտացիորեն պատկերել նրա գեղարվեստական նկարագիրը: «...Ավանդական կերպարները,— ասում է հեղինակը,— հաստատուն տեղ ունեն մեր գրականության մեջ, քանի որ դրանք կան կյանքում, բայց հավասար իրավունքով տեղ պետք է գրվեն նաև այն նոր կերպարները, որոնք նման չեն առաջիններին, բայց նույնպես մեր օրերի և հարաբերությունների ծնունդ են»: («Գարուն»—1968, № 3, էջ 20):

Հեղինակը իր ստեղծագործական կարողությունների սահմաններում աշխատել է մարմնավորել իր ժամանակի այդ կերպարներին: Սիրել մարդկանց, օգտակար լինել նրանց,— սա է գրողի ստեղծագործությունների կենտրոնական մոտիվը:

Վ. Պետրոսյանի բոլոր գրքերն էլ ջերմությամբ են ընդունվում ընթերցողների կողմից: Պետրոսյանը նաև հիանալի լրագրող է: Նա կարողանում է ապրել իր ժամանակի հուզող հարցերով, կարծես օդում բռնել հարցադրումները և մամուլի միջոցով տալ իր պատասխանները, հետաքրքիր հոդվածներով նոր հարցադրումներ առաջացնել ընթերցող լայն հասարակության մեջ: Վ. Պետրոսյանը իր հրապարակախոսական և ստեղծագործական աշխատանքներով մեծապես նպաստել է երիտասարդության կոմունիստական դաստիարակության գործին: Նրա գրքերը թարգմանվել են ռուսերեն, լեհերեն, իսպաներեն, լատիշերեն, լիտվերեն: Պետրոսյանի «Ճանապարհ» պատմվածքի հիման վրա «Մոսֆիլմը» նկարահանել է «Քարե կիլոմետրեր» կարճամետրաժ կինոնկարը:

Вардгес Амазаспович Петросян родился в 1932 г. в Аштараке. Среднее образование получил в Ереване в школе имени 26-ти Комиссаров. В 1949 году поступил на отделение журналистики филологического факультета Ереванского госуниверситета и закончил его в 1954 г.

В. Петросян начал заниматься журналистикой в студенческие годы. Он работал в студенческой газете университета. В 1954—1955 гг. был ответственным секретарем районной газеты «Баязетский колхозник». В 1955—1957 гг. работал в республиканской газете «Советакан Айастан», «Авангард»—ответственным секретарем.

С 1961—1966 гг. редактировал республиканскую пионерскую газету «Пионер канч» («Пионерский клич»).

С 1966 года работает редактором молодежного журнала «Гарун» («Весна»).

Свою творческую биографию В. Петросян начинает со сборника стихов «Баллада о человеке» (1958 г.), затем появляется книга рассказов «Последняя ночь», сборники: «Незаконченные портреты», «Приоткрытые окна города».

Русский читатель знает Петросяна по рассказу «В путь», напечатанному в газете «Известия», по сборнику «Мама, я уже взрослый», изданному в 1964 году в Москве издательством «Молодая гвардия». Впоследствии по мотивам рассказа «В путь» на киностудии «Мосфильм» был поставлен кинофильм «Каменные километры».

Произведения Петросяна отличаются актуальностью тематики, яркостью и правдивостью характеров, свежестью языка.

В. Петросяну присвоено звание «Лауреата Ленинско-

го комсомола Армении» и премия ЦК ЛКСМ Армении в области литературы и искусства, учрежденная к 50-летию ВЛКСМ.

В. Петросян член КПСС с 1952 года.

Награжден Юбилейной памятной медалью за доблестный труд в ознаменовании 100-летия со дня рождения В. И. Ленина.

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒՄ ԵՆՔ ՁԵՋ ԿԱՐԳԱՎ Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻ  
ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ  
ՆՐԱ ՄԱՍԻՆ

Рекомендуем вам прочесть произведения  
В. Петросяна и литературу о нем

ԲԱՎԼԱԳ ՄԱՐԳՈՒ ՄԱՍԻՆ: [Բանաստեղծություններ]: Եր.,  
Հայպետհրատ, 1958, 50 էջ:

Ժողովածուն բաղկացած է «Ճանապարհներ», «Նորից դրպրոցում», «Սիրո աստղեր» բաժիններից: Պետրոսյանի բանաստեղծությունները նվիրված են մեծ կենսին, ժողովուրդների ինտերնացիոնալիզմին, սովետական դպրոցին:

ՎԵՐՋԻՆ ԳԻՇԵՐԸ: [Պատմվածքներ: Վիպակ]: Եր., Հայպետհրատ, 1959, 288 էջ:


Բովանդ.՝ «Պատմվածքներ մարդու մասին շարքից».  
(Երանի թե կորցրած լինեի...):—Եթե առողջ է արմատը:—  
Ճանապարհին:—Հաշվետարի սերը:—Ժայռը ծովափին:—  
Նրա դիմանկարը:—Ո՞ւմ նստարանն է...:—Հայրը, որդին և  
նշմարտությունը:—Նա՞ էր արդյոք:—Վերջին գիշերը:—Զրն-  
հալը հունիսին:

Ժողովածուն հեղինակի արձակ ստեղծագործությունների  
առաջին գիրքն է, որտեղ զետեղված են զանազան պատմը-  
վածքներ և մի վիպակ: «Պատմվածքներ մարդու մասին»  
շարքը պատմում է հարուստ ներաշխարհով, մեծ կամքով

օժտված մարդկանց մասին, մարդիկ, որոնք իրենց վարքագծով հաստատում են մարդկային հոգու գեղեցկությունն ու վեհությունը: Կավին զուգահեռ՝ հեղինակը ցույց է տվել նաև կյանքում հանդիպող վատը, քննադատել է մարդկային արատները և եսամոլությունը, բթամտությունը, բյուրոկրատիզմը, անհավատարմությունը: Պատմվածքների թեմաները բազմազան են, սակայն դրանք բոլորն էլ նպատակ ունեն ցույց տալու թե ինչպիսին պետք է լինի մարդը:

«Ձնհալից հետո» վիպակը պատկերում է համալսարանի երկրաբանական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողների փոխհարաբերությունները:

ԱՆԱՎԱՐՏ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ: Եր., Հայպետհրատ, 1963, 307 էջ:



Բովանդ.՝ ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ԿՅԱՆՔԻ ՆՈՎԵԼՆԵՐԻՑ. Կինը, որին այլևս չհանդիպեցի:— Բարի լույս, Ջեկ, ինչպե՞ս անցավ գիշերը... Մարզու նախապահը:— «Ինչո՞ւ, ես կորցրի իմ սերը...»:— Այգին դատարանի բակում:— Ճանապարհին:— Իսկ ես դեռ չեմ եմ Բո ծաղիկները:— Ուշացած երջանկություն:— Պարտվողի հետ աղջիկները շեն ժամադրվում:— Եթե երկինքը կապույտ լիներ...— Չորս անավարտ դիմանկար:— Ուրիշի գառունը:— Իմ ամենավերջին խաղալիքը:— Ճանապարհը հիշողություն չունի:— Տխուր պատմվածք, որը կարող է նաև ուրախ կոչվել:— ԴԻՄԱՆԿԱՐՆԵՐ ՄԻ ՍԵՐՆԴԻՑ, ՈՐԸ ՀԻՄԱ 17 ՏԱՐՆԿԱՆ Է. «Մամա, ես արդեն մեծացել եմ»:— Դիմանկարներ իմ օրերի մարդկանցից, որոնք անուն ունեն, հասցե: Վերջին գիշերը:— Արևը վստահելի ձեռքերում:— Մեհերաբի աղբյուրը:— Կոմբայնավարը այնպես, ինչպես որ կա:— Ինչ արժե մարզու ժպիտը:— ԱՇԽԱՐՀԻ ՃԱՆԱՊԱՐՉՆԵՐՈՎ. Բելգիան և բելգիացիները:

Գրքի համար դժվար էր այլ վերնագիր պատկերացնել: Այն իրոք բովանդակում է մեր օրերի կյանքը, տալիս մեր ժամանակի մարդկանց դիմանկարները: Անավարտ թե ավարտուն, այդ դիմանկարները մեծ մասամբ խոսում են ընթերցողի հետ: Վերցնելով կյանքից որևէ սովորական դեպք, հեղինակը գտնում է նրա լուսավոր ակնթարթը, բանաստեղծականացնում առօրյան, սահղծում ոռմանտիկ կերպարներ, որոնք և՛ ուժեղ են, և՛ թույլ, և՛ բարի, որքան ոռմանտիկ, նույնքան էլ սեպ, իրական:

Պետրոսյանի հերոսները մեծ մասամբ երիտասարդներ են. նոր կյանք մտած, հաճախ կյանքի դժվարություններին դիմհար կանգնած, բայց միշտ ինչ-որ պայծառ շող իրենց «հոգու լուսամփոփի տակ պահած» այդ մարդիկ, ինչպիսի հանգամանքներում էլ գտնվելիս լինեն, մնում են մարդ: Ահա այս՝ Մարզու և մարդկայինի պրոբլեմն է, որ ամենից շատ հուզում է հեղինակին: Միշտ արծարծվող, միշտ նորոգվող մի պրոբլեմ: «Աշխարհի բոլոր նովելները կյանքն է գրում: Գրողները պատահաբար միայն լսում, իսկ ավելի հաճախ շեն լսում այդ նովելները...», — գրքի սկզբում գրում է հեղինակը:

ՔՍՂԱՔԻ ԿԻՍՍՔԱՅ ԼՈՒՍԱՄՈՒՏՆԵՐԸ: [Վիպակ]: Եր.,  
Հայպետհրատ, 1964, 139 էջ:

Հեղինակի նկարագրած միջավայրը Երևան քաղաքն է, հե-  
րոսները երևանցիներ են, տարբեր ձևակառուցողների ու տարի-  
քի մարդիկ: Գլխավոր հերոսը երիտասարդ էլեկտրիկ Գագիկն  
է, կյանքին ու հարազատ քաղաքին սիրահարված մի երի-  
տասարդ: Ընդհանրապես վիպակը մի անպաճույճ պատմու-  
թյուն է մարդկանց գեղեցիկ, հարուստ հոգիների մասին:




ՀԱՅԿԱԿԱՆ ԷՍՔԻԶՆԵՐ: [Մանրապատումներ]: Եր., «Հա-  
յաստան», 1969, 147 էջ:

Մտքեր, զգացումներ, տպավորություններ, հիշողություն-

ներ հիացումներ, (նաև հուսախաբուցյուններ, հիասթափու-  
թյուններ) կարոտներ, երազներ, զգացմունքների աշխարհ,  
այն բոլորը, ինչ ժամանակի ու տարածության մեջ գրողը կա-  
րող էր ապրել իր հայրենիքի ու ժողովրդի մասին խորհելիս:


Վ. Պետրոսյանը այս գրքում որպես ստեղծագործական  
մեթոդ դիմել է հանրահայտ մի օրենքի՝ բաժանիր, որ տիրես:  
Նա փորձել է «Հայաստան», «Հայ ժողովուրդ» հասկացու-  
թյունները, ավելի ճիշտ՝ այդ երկուսի միասնությունը բաժա-  
նել բաղադրիչ մասերի, տալ այդ երկուսի միասնության ներ-  
քին էությունը կազմող բնորոշ կողմերի նկարագրությունը,  
վերջում կերպարի ամբողջական պատկերը ստանալու հույ-  
սով: Այդ պատճառով հայն ու Հայաստանը նրա համար ամեն  
անգամ տարբեր են: Մերթ պատմական մի ավանդություն է,  
մոռացություն մեջ թաղված թագավորների մասունքներ, մերթ  
աշխարհի տարբեր կողմերում դեզերող ու հայրենիքի կարո-  
տով տառապող (նաև օտար ափերում օտարներին ձուլվող  
հայեր), սրճարանի միկնույն սեղանի մոտ նստած, տարբեր  
զույգեր, որոնք հայեր են, բայց կարծես տարբեր դարաշրջ-  
աններից եկած, մի Ֆիզիկոս, մի նկարիչ, մի ճարտարա-  
պետ, ճարտարապետական մի հին ու նոր կոթող, գերեզմա-  
նաքարեր՝ հայտնի, անհայտ մարդկանց, դեպքեր, պատմու-  
թյան մեջ հետք թողած դեմքեր... Ու աննկատելիորեն բռնկ-  
վում է սպիտակ թուղթը, գրողի ապրած հույզը փոխանցվում  
է ընթերցողին...

Գիրքը շունի ավանդական կուռ կառուցվածք: Գրական  
մանրանկարներ են, էսքիզներ, իրարից անջատ, տարբեր,  
սակայն շողկապված օրգանական սերտ կապով: Հեղինակը  
փնտրում է, գտնում, կորցնում, ուրախանում, տխրում, ինչ-  
որ ձևով ուզում է կենդանի, շոշափելի դարձնել «Հայ», «Հա-  
յաստան» հասկացությունները, նրանց պատմությունն ու ներ-  
կան, ներքին էությունը, ծիրանի ծառ հիշեցնող կենսունա-  
կությունը, որին աշխարհում բաժին ընկավ մի քար, քարաս-  
տան, հրաշք հայրենիք ու բազմադարյան մաքառող ճամփա,  
մի լույս հայրենիք: Գիրքը թարգմանվել է ռուսերեն, լեհերեն,  
իսպաներեն:



Ա.ՊՐԱՄ ԵՎ ՉԱ.ՊՐԱՄ ՏԱՐԻՆՆԵՐ: [Վիպակ, պատմվածքներ, ուղեգրություն]: Եր., «Հայաստան», 1970, 387 էջ:

Բովանդ.՝ ԻՆՉՈՒ ԵՆ ՇՈՒՏ ՄԵՌՆՈՒՄ ԾԱՂԻԿՆԵՐԸ: Ինչու են շուտ մեռնում ծաղիկները:—Ճանապարհին:—Ուշացած երջանկություն:—Եթե կապույտ լինեք երկինքը:—Տգեղ աղջիկներ չկան:—Տխուր վերջավորությամբ հեփիաք:—Մերուկը, որ մոռացել էր մեռնել:—Աշխարհի ամենալավ մարդը:—Անցած տարվա ծաղիկները:—Մի երկար գիշեր ու մի կարճ առավոտ:—Ա.ՊՐԱՄ ԵՎ ՉԱ.ՊՐԱՄ ՏԱՐԻՆՆԵՐ: Ապրած և չապրած տարիներ:—Հայկական էսֆիզներ:—ԿԱՐՍԻՅ ՄԻՆՉԵՎ ՏՐՈՅԱ: Կարսից մինչև Տրոյայի ավերակները:—Երկնում են մեռնում ծաղիկները:



Ժողովածուում ամփոփված պատմվածքների մի մասը, վերամշակված ձևով, վերցրված է «Անավարտ դիմանկարները» գրքից: Մյուսները տպագրվել են գրական մամուլում, «Հայկական էսֆիզները» լույս է տեսել առանձին գրքով: «Կարսից մինչև Տրոյայի ավերակները» ուղեգրությունը մամուլում տպագրվելուց հետո, լրացվել, ամբողջացվել է և այդ վիճակում լույս է տեսնում առաջին անգամ: «Երկնում են մեռնում ծաղիկները» վավերագրական պատմվածքի փորձ է, որի նյութն է հայազգի Գաստելլոյի՝ Արտյուշա Օհանջանյանի կյանքն ու ստեղծագործությունը:

Վ. Պետրոսյանը շատ է գրում, շատ է կարդացվում, նա



ԶԱՐՅԱՆ Ն. Պատանի բանաստեղծը: [Վ. Պետրոսյանի մասին]:—«Գրական թերթ», 1948, № 23, էջ 3:

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Ղ. Կյանքի նովելները լսելու ձգտումով: [Գրախոսություն «Անավարտ դիմանկարներ» գրքի մասին]:—«Սովետական Հայաստան», 1963, 29 օգոստոսի, էջ 4:

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Հ. Գրական նոր սերնդի աշխարհը: [Նաև Վ. Պետրոսյանի մասին]:—«Սովետական գրականություն», 1966, № 2, էջ 124—125:

ՄԻԽՔԱՐՅԱՆ Մ. Պատմվածքներ մարդու մասին: [Գրախոսություն «Վերջին գիշերը» գրքի մասին]:—«Սովետական գրականություն», 1959, № 12, էջ 154—156:

ՍԱՀԱԿՅԱՆ Ա. 1968-ի մեր դափնեկիրները: [Նաև Վ. Պետրոսյանի մասին]:—«Գարուն», եր., 1969, № 2, էջ 38—42:

## Л и т е р а т у р а

АРМЯНСКИЕ записки. Пер. с арм. С. Котенко.— В кн. Комсомол республики представляет писателей и поэтов-лауреатов премий Ленинского комсомола за 1968 год. М., «Молодая гвардия», 1970, с. 86—100 с илл.

То же: «Молодая гвардия», 1968, № 6, с. 211—227.— [В пер. И. и Дж. Карумяна].— «Лит. Армения», 1970, № 7, с. 3—13.

МАМА я уже взрослый. Две повести. [Авториз. пер. с арм. Е. Алексаняна, А. Саградян, Э. Кананян].— М., «Мол. гвардия», 1964, 192 с.

В ПУТИ. [Новелла. Пер. А. Гамбарян].— В кн.: Избранные страницы советской армянской литературы. Проза. Ереван. Армгосиздат, 1960, с. 502—505.

ДОБРОЕ утро. Джек... Рассказ. Пер. Е. Алексанян.— «Лит. Армения», 1961, № 1, с. 6—15.

ЕСЛИ б синим было небо. Рассказ. Пер. с арм. О. Иванова.— «Лит. Армения», 1962, № 1, с. 65—67.

ЖЕНЩИНА, которую я больше не встретил.— Путь человека. Рассказ. [Пер. Л. Гулянова; А. Баяндур].— «Лит. Армения», 1960, № 4, с. 49—57.

КАРУСЕЛЬ. [Отрывок из повести «Окна города приоткрыты»].— «Комсомолец», 1960. Ереван, 29 марта, с. 3.

ОКНА города полуоткрыты. Рассказ. Пер. с арм.: Э. Кананова.— «Лит. Армения», 1963, № 11, с. 38—41.

То же: [Отрывки].— «Комсомолец», Ереван, 1963, 18 сент. с. 2—3.

ПОСЛЕДНЯЯ ночь. [Из цикла «Рассказы о человеке»]. Пер. Е. Алексанян.— «Лит. Армения», 1958, № 1, с. 73—80.

ПУТЬ человека. [Рассказ]. Пер. А. Баяндур.— «Лит. Армения», 1960, № 4, с. 53—57.

НЕПРОЖИТЫЕ годы. [Рассказ].— Пер. с арм. М. Мазманян.— «Лит. Армения», 1968, № 9, с. 33—40.

РОДНИКИ. [Очерки].— «Комсомольская правда», 1969, 7 авг. с. 4.

То же: «Комсомолец», Ереван, 1969, 13 авг. с. 3.

САМЫЙ лучший в мире. [Рассказ]. Пер. с арм.: Э. Кананова.— «Комсомолец», Ер., 1966, 3 июля, с. 2, 3.

СОЛНЦЕ в надежных руках. [Три новеллы о Мартиросе Сарьяне].— Если б синим было небо. [Рассказ]. Пер. О. Иванова.— «Лит. Армения», 1962, № 1, с. 63—67.

Тринадцать минус пятнадцать. [Отрывок из повести].— «Комсомолец», Ереван, 1965, 26 декабря, с. 2.

УРАВНЕНИЕ со многими неизвестными. [О национальном облике и национальной литературе].— «Лит. Армения», Ереван, 1968, № 10, с. 62—73.

ЧЕГО стоит улыбка. Очерк. [О географе Р. Габриеляне].— «Лит. Армения», 1962, № 3, с. 60—66.

ЧЕТЫРЕ неоконченных портрета. Рассказ. Пер. с арм. Е. Алексанян.— «Коммунист», Ереван, 1962, 28 июля, с. 3.

О нем

АДАЛЯН Н. Необычность обычного. [Рец. в кн. «Армянские эскизы»].— «Лит. Армения», 1970, № 8, с. 97—98.

АЛАДЖАДЖЯН С. Путь к мастерству. [О творчестве писателя В. Петросяна].— «Комсомолец», Ереван, 1969, 26 января, с. 2, 4.

АЛЕКСАНИЯ Е. О человеке. [Рец. на кн. «Последняя ночь на арм. яз.».— «Дружба народов», 1960, № 4, с. 249—251.

БАБЛОЯН В. Когда оживают портреты. [Рец. на кн. «Незаконченные портреты» на арм. яз.].— «Лит. Армения», 1964, № 9, с. 95—99.

ДЫЧКО Д. С любовью к миру и людям.—В кн. Комсомол республики представляет писателей и поэтов-лауреатов премий ленинского комсомола за 1968 год. М., «Молодая гвардия», 1970, с. 80—84.

СИРКЕС П. Озабоченное новаторство.—«Дружба народов», 1965, № 8, с. 280—282.

Տեխ. խմբագիր՝ Հ. Մարտիրոսյան  
Վերստուգող սրբագրիչ՝ Ա. Գևորգյան

ՎՅ 3351

Պատվեր 1156

Տիրաժ 1000

Տպագրական 1,25 մամուլ, հեղ. 0,7 մամ.

Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի  
պոլիգրաֆարդյունաբերության վարչության № 6 տպարան,  
Երևան, Թումանյան փ. № 23/1:



«Ազգային գրադարան»



NL0128118

44366

ԳԻՆԸ 10 ԿՈՊ.